

ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին թիվ 80/934/ԵՏՀ կոնվենցիա՝ բացված ստորագրման համար Հոռմում, 1980 թվականի հունիսի 19-ին (*համահավաք տարբերակ CF 498Y0126(03) *)

Պաշտոնական տեղեկագիր, L 266 , 09.10.1980թ., էջ 0001 - 0019

Բսպաներեն հատուկ հրատարակություն. գլուխ 01, հատոր 3, էջ 0036 0036

Պորտուգալերեն հատուկ հրատարակություն. գլուխ 01, հատոր 3, էջ 0036

Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին թիվ (80/934/ԵՏՀ) կոնվենցիա՝ բացված ստորագրման համար Հոռմում, 1980 թվականի հունիսի 19-ին:

ՆԱԽԱԲԱՆ

Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրի ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԲԱՐՁՐ ԿՈՂՄԵՐԸ,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ շարունակել միջազգային մասնավոր իրավունքի ոլորտում իրավունքի միասնականացման՝ Համայնքում արդեն ծավալված աշխատանքը, մասնավորապես, իրավասության և վճիռների կատարման ոլորտում,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ սահմանել պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի վերաբերյալ միասնական կանոններ,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՇՈՒՐՁ.

ԲԱԺԻՆ I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Հոդված 1

Կոնվենցիայի գործողության ոլորտը

1. Սույն Կոնվենցիայի նորմերը կիրառվում են պայմանագրային պարտավորությունների նկատմամբ այն դեպքերում, երբ անհրաժեշտ է ընտրություն կատարել տարբեր երկրների իրավունքների միջև:

2. Սույն Կոնվենցիայի նորմերը չեն կիրառվում՝

ա) ֆիզիկական անձանց կարգավիճակի կամ գործունակության հետ կապված հարցերի նկատմամբ՝ չսահմանափակելով 11-րդ հոդվածի գործողությունը.

բ) պայմանագրային պարտավորությունների նկատմամբ, որոնք վերաբերում են՝

- կտակին և իրավահաջորդությանը.

- ամուսնական հարաբերություններից ծագող գույքային իրավունքներին.

- ընտանեկան հարաբերություններին, հայրությանը և (կամ) մայրությանը, ամուսնությանը կամ ազգակցական կապի վրա հիմնված իրավունքներին և պարտականություններին, ինչպես նաև ամուսնության մեջ չգտնվող ծնողներից ծնված երեխաների հանդեպ ալիմենտային պարտավորություններին.

գ) փոխանցելի մուրհակների, չեկերի և հասարակ մուրհակների ու այլ շրջանառու փաստաթղթերից ծագող պարտավորությունների նկատմամբ, այնքանով, որքանով այդ այլ շրջանառու փաստաթղթերով նախատեսված պարտավորությունները բխում են դրանց շրջանառունակությունից.

դ) արբիտրաժային համաձայնության և դատարանի ընտրության մասին համաձայնության նկատմամբ.

ե) ընկերությունների և առևտրային կամ ոչ առևտրային այլ կազմակերպությունների մասին իրավունքով կարգավորվող հարցերի նկատմամբ, ինչպիսիք են, օրինակ, ընկերությունների և այլ առևտրային ու ոչ առևտրային կազմակերպությունների գրանցման կամ այլ եղանակով ստեղծումը, դրանց իրավունակությունը, ներքին կազմակերպական կառուցվածքը կամ լուծարումը և ընկերության կամ կազմակերպության պարտավորությունների համար դրանց պաշտոնատար անձանց և անդամների անձնական պատասխանատվությունը.

զ) գործակալի կողմից պրինցիպալի համար կամ առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության մարմնի կողմից՝ այդ կազմակերպության համար երրորդ անձի հանդեպ պարտավորություն ստեղծելու իրավասության նկատմամբ.

է) հավատարմագրային կառավարման հիմնադրման և կառավարման հիմնադիրների, հավատարմագրային կառավարիչների ու շահառուների հարաբերությունների նկատմամբ.

ը) ապացույցների և դատավարության նկատմամբ՝ չսահմանափակելով 14-րդ հոդվածի գործողությունը:

3. Սույն Կոնվենցիայի նորմերը չեն կիրառվում ապահովագրության մասին այն պայմանագրերի նկատմամբ, որոնցով ապահովագրվում են Եվրոպական տնտեսական համայնքի անդամ պետությունների տարածքներում առկա ռիսկերը: Այդ տարածքներում ռիսկի առկայությունը դատարանը որոշում է իր պետության իրավունքի հիման վրա:

4. Նախորդ պարբերությունը չի կիրառվում վերաապահովագրության մասին պայմանագրերի նկատմամբ:

Հոդված 2

Չպայմանավորվող պետությունների իրավունքի կիրառումը

Սույն Կոնվենցիայում նշված ցանկացած նորմ ենթակա է կիրառման՝ անկախ Պայմանավորվող պետությունում գործող իրավունքի նորմերից:

ԲԱԺԻՆ II. ՄԻԱՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հոդված 3

Ընտրության ազատությունը

1. Պայմանագիրը կարգավորվում է կողմերի ընտրած իրավունքով: Ընտրությունը պետք է բավականաչափ հստակ արտահայտված լինի պայմանագրի դրույթներում կամ գործի հանգամանքներով: Կողմերը կարող են իրենց հայեցողությամբ ընտրել ամբողջ պայմանագրի կամ դրա միայն մի մասի նկատմամբ կիրառվող իրավունքը:
2. Կողմերը կարող են ցանկացած ժամանակ պայմանավորվել պայմանագրի նկատմամբ կիրառելու այլ իրավունք, քան այն, որով նախկինում սույն հոդվածի համաձայն, կատարած ընտրության կամ սույն Կոնվենցիայի այլ դրույթների կիրառության արդյունքում կարգավորվում էր պայմանագիրը: Պայմանագիրը կնքելուց հետո՝ կիրառվող իրավունքում կողմերի կատարած ցանկացած փոփոխություն չպետք է խախտի սույն Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված վավերության ձևական պահանջները կամ խախտի երրորդ կողմի իրավունքները:
3. Այն փաստը, որ կողմերն ընտրել են օտարերկրյա իրավունք, անկախ այն հանգամանքից՝ դա ուղեկցվում է օտարերկրյա տրիբունալի ընտրությամբ, թե ոչ, չպետք է, երբ ընտրության պահին առկա իրավիճակի հանգամանքները կապված են միայն մեկ երկրի հետ, սահմանափակի տվյալ երկրի իրավունքի այն նորմերի կիրառումը, որոնցից պայմանագրով շեղվել չի թույլատրվում (այսուհետ՝ «իմպերատիվ նորմեր»):
4. Կիրառվող իրավունքի ընտրության հարցում կողմերի համաձայնության գոյությունը և վավերությունը որոշվում է՝ համաձայն 8-րդ, 9-րդ և 11-րդ հոդվածների:

Հոդված 4

Ընտրության բացակայության դեպքում կիրառվող իրավունքը

1. Եթե պայմանագրի նկատմամբ կիրառվող իրավունքը չի ընտրվել 3-րդ հոդվածի համաձայն, ապա պայմանագիրը կարգավորվում է այն երկրի իրավունքով, որի հետ առավել սերտ է կապված տվյալ պայմանագիրը: Այնուամենայնիվ, պայմանագրի տարանջատելի մասը, որն առավել սերտ է կապված մեկ այլ երկրի հետ, կարող է բացառության կարգով կարգավորվել այդ երկրի իրավունքով:
2. Սույն հոդվածի 5-րդ պարբերության դրույթների պահպանմամբ՝ պայմանագիրը համարվում է առավել սերտ կապված այն երկրի հետ, որտեղ պայմանագրի կնքման պահին այն կողմի բնակության վայրն է, որը կատարում է նման պայմանագրի բովանդակության համար վճռական նշանակություն ունեցող պայմանը, իսկ առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության դեպքում՝ այն երկիրը, որտեղ գտնվում է դրա կառավարման կենտրոնական մարմինը: Այնուամենայնիվ, եթե պայմանագիրը կնքվում է այդ կողմի առևտրային կամ մասնագիտական գործունեության ընթացքում, ապա այդ երկիրը կլինի այն երկիրը, որտեղ գտնվում է ձեռնարկատիրական գործունեության հիմնական վայրը, իսկ, եթե պայմանագրի համաձայն կատարումը տեղի է ունենալու ձեռնարկատիրական

գործունեությունից բացի՝ ոչ հիմնական վայրում, ապա՝ այն երկիրը, որտեղ գտնվում է այդ վայրը:

3. Անկախ սույն հոդվածի 2-րդ պարբերության դրույթներից այնքանով, որքանով պայմանագրի առարկան անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ դրա օգտագործման իրավունքն է, պայմանագիրը համարվում է առավել սերտ կապված այն երկրի հետ, որի տարածքում գտնվում է այդ անշարժ գույքը:

4. Այդ դեպքում, եթե երկիրը, որտեղ պայմանագրի կնքման պահին գտնվում է փոխադրողի ձեռնարկատիրական գործունեության հիմնական վայրը, նաև այն երկիրն է, որտեղ գտնվում է ապրանքների բեռնման կամ բեռնաթափման վայրը կամ առաքողի ձեռնարկատիրական գործունեության հիմնական վայրը, ապա պայմանագիրը համարվում է առավել սերտ կապված այդ երկրի հետ: Սույն պարբերությունը կիրառելիս միանգամյա չարտերի և այլ պայմանագրերը, որոնց հիմնական նպատակն ապրանքների փոխադրումն է, համարվում են ապրանքների փոխադրման պայմանագրեր:

5. Պայմանագրի բովանդակության համար վճռական նշանակություն ունեցող պայմանը որոշելու անհնարինության դեպքում, սույն հոդվածի 2-րդ պարբերությունը չի կիրառվում, և սույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններով սահմանված կանխավարկածները հաշվի չեն առնվում, եթե հանգամանքներից պարզ է դառնում, որ պայմանագիրն առավել սերտ է կապված մեկ այլ երկրի հետ:

Հոդված 5

Սպառողական որոշ պայմանագրերը

1. Սույն հոդվածը կիրառվում է այն պայմանագրի նկատմամբ, որի նպատակը ապրանքների մատակարարումը կամ ծառայությունների մատուցումն է որևէ անձի (այսուհետ՝ «սպառող»)՝ իր առևտրային կամ մասնագիտական գործունեության շրջանակներից դուրս՝ այլ նպատակով, ինչպես նաև այդ նպատակի համար վարկի տրամադրման պայմանագրի նկատմամբ:

2. Անկախ 3-րդ հոդվածի դրույթներից՝ կողմերի ընտրած իրավունքը չի կարող սպառողին զրկել իր բնականության վայրի երկրի իրավունքի իմպերատիվ նորմերով վերապահված պաշտպանությունից, եթե

- այդ պետությունում պայմանագրի կնքմանը նախորդել է որոշակի առաջարկ՝ հասցեագրված նրան կամ արված գովազդի միջոցով, և նա այդ երկրում ձեռնարկել է իրենից պահանջվող բոլոր քայլերը՝ պայմանագիրը կնքելու համար կամ

- մյուս կողմը, կամ իր գործակալը սպառողական պատվերն ստացել է այդ երկրում, կամ

- պայմանագիրը վերաբերում է ապրանքների առուվաճառքին, և սպառողը տվյալ երկրից ուղևորվել է մեկ այլ երկիր և այնտեղ պատվեր տվել՝ պայմանով, որ սպառողի ուղևորությունը կազմակերպել է վաճառողը՝ նպատակ ունենալով սպառողի մոտ գնում կատարելու ցանկությունն առաջացնել:

3. Անկախ 4-րդ հոդվածի դրույթներից՝ պայմանագիրը, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը, պետք է 3-րդ հոդվածով նախատեսված ընտրության բացակայության դեպքում

կարգավորվի սպառողի բնակության վայրի երկրի իրավունքով, եթե պայմանագիրը կնքվել է սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված հանգամանքներում:

4. Սույն հոդվածը չի կիրառվում՝

ա) փոխադրման պայմանագրի նկատմամբ.

բ) ծառայությունների մատուցման պայմանագրի նկատմամբ, երբ սպառողին ծառայությունները մատուցվում են բացառապես այն երկրում, որը սպառողի բնակության վայրի երկիրը չէ:

5. Անկախ 4-րդ պարբերության դրույթներից՝ սույն հոդվածը կիրառվում է այն պայմանագրի նկատմամբ, որը միաժամանակ ուղևորության և կացարանի համար նախատեսում է մեկ ընդհանուր վարձավճար:

Հոդված 6

Անհատական աշխատանքային պայմանագրերը

1. Անկախ 3-րդ հոդվածի դրույթներից՝ աշխատանքային պայմանագրի դեպքում կողմերի ընտրած իրավունքը չպետք է աշխատողին զրկի պաշտպանությունից՝ վերապահված այն իրավունքի իմպերատիվ նորմերով, որը կիրառվող իրավունքի ընտրության բացակայության դեպքում կկիրառվեր 2-րդ պարբերության համաձայն:

2. Անկախ 4-րդ հոդվածի դրույթներից՝ աշխատանքային պայմանագիրը 3-րդ հոդվածով նախատեսված ընտրության բացակայության դեպքում կարգավորվում է՝

ա) այն երկրի իրավունքով, որտեղ աշխատողը սովորաբար կատարում է պայմանագրով նախատեսված աշխատանքը, նույնիսկ, եթե նա ժամանակավորապես աշխատանքային գործունեություն է իրականացնում մեկ այլ երկրում կամ

բ) եթե աշխատողը սովորաբար չի կատարում իր աշխատանքը որևէ մեկ այլ երկրում, ապա այն ձեռնարկատիրական գործունեության վայրի երկրի իրավունքով, որում նա ընդգրկված է որպես աշխատող՝

բացառությամբ այն դեպքերի, երբ հանգամանքներից պարզ է դառնում, որ պայմանագիրն առավել սերտ է կապված մեկ այլ երկրի հետ, որի դեպքում պայմանագրի նկատմամբ կիրառվում է այդ երկրի իրավունքը:

Հոդված 7

Իմպերատիվ նորմերը

1. Սույն Կոնվենցիայով նախատեսված որևէ երկրի իրավունքը կիրառելիս կարող են գործողության մեջ դրվել իրավիճակի հետ սերտորեն կապված այլ երկրի իմպերատիվ նորմերը, եթե, և այնքանով, որքանով այդ երկրի իրավունքի համաձայն այդ նորմերը պետք է գործողության մեջ դրվեն՝ անկախ պայմանագրի նկատմամբ կիրառվող իրավունքից: Նշված իմպերատիվ նորմերի կիրառման հարցը որոշելիս պետք է հաշվի առնել դրանց բնույթը և նպատակը, ինչպես նաև դրանք կիրառելու կամ չկիրառելու հետևանքները:

2. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չպետք է սահմանափակի գործի քննության վայրի իրավունքի նորմերի կիրառումն այն դեպքում, երբ այդ նորմերը պարտադիր են՝ անկախ այլ հանգամանքներում պայմանագրի նկատմամբ կիրառվող իրավունքից:

Հոդված 8

Բովանդակային վավերությունը

1. Պայմանագրի կամ դրա ցանկացած պայմանի գոյությունը և վավերությունը որոշվում է այն իրավունքով, որով, սույն Կոնվենցիայի համաձայն, կկարգավորվեր պայմանագիրը՝ դրա կամ տվյալ պայմանի վավերության դեպքում:

2. Այնուամենայնիվ, կողմը կարող է իր համաձայնության բացակայությունը հիմնավորելու համար վկայակոչել իր բնակության վայրի երկրի իրավունքը, եթե հանգամանքներից պարզ է դառնում, որ իրատեսական չէր լինի որոշել կողմի վարքագծի հետևանքները՝ նախորդ պարբերությունում նշված իրավունքի համաձայն:

Հոդված 9

Ձևական վավերությունը

1. Միննույն երկրի տարածքում գտնվող անձանց միջև կնքված պայմանագիրը ձևական առումով վավեր է, եթե այն համապատասխանում է տվյալ պայմանագրի նկատմամբ սույն Կոնվենցիայով կիրառվող իրավունքի կամ այն երկրի իրավունքի ձևական պահանջներին, որտեղ կնքվել է այդ պայմանագիրը:

2. Տարբեր պետություններում գտնվող անձանց միջև կնքված պայմանագիրը ձևական առումով վավեր է, եթե այն համապատասխանում է այդ պայմանագրի նկատմամբ սույն Կոնվենցիայով կիրառվող իրավունքի կամ այդ երկրներից որևէ մեկի իրավունքի ձևական պահանջներին:

3. Եթե պայմանագիրը կնքվում է գործակալի կողմից, երկիրը, որտեղ գործում է գործակալը, 1-ին և 2-րդ պարբերությունների իմաստով համապատասխան երկիրն է:

4. Գոյություն ունեցող կամ նախատեսվող պայմանագրի համար իրավական հետևանք առաջացնելու մտադրությամբ կատարված գործողությունը վավեր է, եթե համապատասխանում է այն իրավունքի ձևական պահանջներին, որը, սույն Կոնվենցիայի համաձայն, կարգավորում է կամ կկարգավորեր պայմանագիրը, կամ այն երկրի իրավունքի ձևական պահանջներին, որտեղ կատարվել է գործողությունը:

5. Նախորդ պարբերության դրույթները չեն տարածվում այն պայմանագրի վրա, որի նկատմամբ կիրառվում է 5-րդ հոդվածը, և որը կնքվել է 5-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նշված հանգամանքներում:

Նման պայմանագրի ձևական վավերությունը կարգավորվում է սպառողի բնակության վայրի երկրի իրավունքով:

6. Անկախ սույն հոդվածի 1- 4-րդ պարբերություններից՝ այն պայմանագրի նկատմամբ, որի առարկան անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ դրա օգտագործման իրավունքն է, կիրառվում են այն երկրի իրավունքի պարտադիր ձևական պահանջները, որտեղ գտնվում է տվյալ գույքը, եթե նշված իրավունքի համաձայն այդ պահանջները պետք է կիրառվեն՝ անկախ պայմանագրի կնքման վայրի երկրից և պայմանագրի նկատմամբ կիրառվող իրավունքից:

Հոդված 10

Կիրառվող իրավունքի գործողության ոլորտը

1. Սույն Կոնվենցիայի 3-6-րդ և 12-րդ հոդվածների հիման վրա պայմանագրի նկատմամբ կիրառվող իրավունքը կարգավորում է, մասնավորապես՝

ա) մեկնաբանությունը.

բ) կատարումը.

գ) դատավարական իրավունքով դատարանին վերապահված լիազորությունների սահմաններում՝ խախտման հետևանքները, այդ թվում՝ վնասի չափի որոշումը, այնքանով, որքանով դա կարգավորվում է իրավունքի նորմերով.

դ) պարտավորությունների կատարման տարբեր եղանակները, ինչպես նաև հայցային վաղեմության ժամկետները և հայց հարուցելու սահմանափակումները.

ե) պայմանագրի անվավերության հետևանքները:

2. Կատարման եղանակի և թերի կատարման դեպքում գործողություններ ձեռնարկելիս պետք է հաշվի առնել այն պետության իրավունքը, որտեղ տեղի է ունենում կատարումը:

Հոդված 11

Անգործունակությունը

Մինչև սույն երկրում գտնվող անձանց միջև կնքված պայմանագրի կողմ հանդիսացող ֆիզիկական անձը, որն այդ պետության իրավունքի համաձայն գործունակ է, կարող է վկայակոչել այլ իրավունքից բխող իր անգործունակությունը՝ պայմանով, որ պայմանագրի մյուս կողմն իմացել է նրա անգործունակության մասին պայմանագիրը կնքելու պահին կամ չի իմացել այդ մասին անփութության պատճառով:

Հոդված 12

Պահանջի կամավոր զիջումը

1. Մեկ այլ անձի (այսուհետ՝ «պարտապան») հանդեպ ունեցած պահանջի կամավոր զիջման դեպքում պահանջը զիջած պարտատիրոջ (ցեղենտ) և նոր պարտատիրոջ (ցեսիոնար) փոխադարձ պարտավորությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրի նկատմամբ սույն Կոնվենցիայի համաձայն կիրառվող իրավունքով:

2. Իրավունքը զիջելու հնարավորությունը (իրավունքի զիջելիությունը), ցեղենտի և ցեսիոնարի միջև հարաբերությունները, պայմանները, որոնց առկայության դեպքում պահանջի զիջումը կարող է վկայակոչվել պարտապանի հանդեպ, ինչպես նաև այն հարցը, թե արդյոք պարտապանը կատարել է իր պարտավորությունները, որոշվում է զիջվող իրավունքը կարգավորող իրավունքով:

Հոդված 13

Սուբրոգացիա

1. Եթե անձը (այսուհետ՝ «պարտատեր») պայմանագրային պահանջ ունի մեկ այլ անձի (այսուհետ՝ «պարտապան») հանդեպ, և որևէ երրորդ անձ պարտատիրոջ պահանջը բավարարելու պարտավորություն ունի կամ արդեն բավարարել է նրա պահանջը՝ ի կատարումն այդ պարտավորության, ապա երրորդ անձի՝ պարտատիրոջ պահանջը բավարարելու պարտավորությունը կարգավորող իրավունքով պետք է որոշվի, թե արդյոք երրորդ անձն իրավասու է պարտապանի հանդեպ իրականացնելու պարտապանի և պարտատիրոջ հարաբերությունները կարգավորող իրավունքով նախատեսված պարտատիրոջ իրավունքները և, եթե կարող է, ապա արդյոք նա այդ իրավունքները կարող է իրականացնել ամբողջությամբ, թե սահմանափակ չափով:

2. Նույն կանոնը կիրառվում է, երբ պայմանագրային միևնույն պահանջը գործում է մի քանի անձանց հանդեպ, և նրանցից մեկը բավարարել է պարտատիրոջ պահանջը:

Հոդված 14

Ապացուցման պարտականությունը և այլն

1. Սույն Կոնվենցիայի համաձայն պայմանագիրը կարգավորող իրավունքը կիրառվում է այնքանով, որքանով պայմանագրային իրավունքում այն պարունակում է կանոններ, որոնք առաջացնում են իրավական կանխավարկածներ կամ սահմանում ապացուցման պարտականությունը:

2. Պայմանագիրը կամ իրավական հետևանք առաջացնելու մտադրությամբ կատարված գործողությունը կարող է ապացուցվել ցանկացած եղանակով, որը նախատեսված է գործը քննող դատարանի վայրի իրավունքով կամ 9-րդ հոդվածում նշված այն իրավունքներից որևէ մեկով, որի ձևական պահանջների համաձայն, այդ պայմանագիրը կամ գործողությունը վավեր է՝ պայմանով, որ ապացուցման այդ եղանակը հնարավոր լինի կիրառել այդ վայրում:

Հոդված 15

Հետադարձ հղումների (renvoi) բացառումը

Սույն Կոնվենցիայով նախատեսված որևէ երկրի իրավունքի կիրառումը նշանակում է տվյալ երկրում գործող իրավական նորմերի կիրառում՝ բացառությամբ միջազգային մասնավոր իրավունքի նորմերի:

Հոդված 16

Հանրային կարգի մասին վերապահումը

Սույն Կոնվենցիայով նախատեսված որևէ երկրի իրավունքի նորմի կիրառումը կարող է մերժվել միայն այն դեպքում, եթե դրա կիրառումն ակնհայտորեն անհամատեղելի է գործի քննության վայրի հանրային կարգի հետ:

Հոդված 17

Հետադարձ ուժի բացառումը

Սույն Կոնվենցիան Պայմանավորվող պետությունում կկիրառվի այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվել են այդ պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո:

Հոդված 18

Միասնական մեկնաբանությունը

Նշված միասնական կանոնները մեկնաբանելիս և կիրառելիս պետք է հաշվի առնել դրանց միջազգային բնույթը և դրանց մեկնաբանման ու կիրառման միասնականացման հասնելու ձգտումը:

Հոդված 19

Մեկից ավելի իրավական համակարգեր ունեցող պետությունները

1. Երբ որևէ պետություն բաղկացած է մի քանի տարածքային միավորներից, որոնցից յուրաքանչյուրն ունի պայմանագրային պարտավորությունների մասին իր իրավական նորմերը, տարածքային յուրաքանչյուր միավոր դիտվում է որպես մեկ երկիր՝ սույն Կոնվենցիայի համաձայն կիրառվող իրավունքը պարզելու նպատակով:
2. Այն պետությունը, որտեղ տարածքային տարբեր միավորներից յուրաքանչյուրն ունի պայմանագրային պարտավորությունների մասին իր իրավական նորմերը, պարտավորված չէ սույն Կոնվենցիան կիրառել բացառապես այդպիսի տարածքային միավորների իրավական նորմերի միջև գոյություն ունեցող հակասությունների նկատմամբ:

Հոդված 20

Համայնքի իրավունքի գերակայությունը

Սույն Կոնվենցիայի գործողությունը չպետք է բացառի այն դրույթների կիրառումը, որոնք, որոշակի խնդիրների առնչությամբ սահմանում են պայմանագրային պարտավորությունների մասին կոլիզիոն նորմեր, և որոնք ընդգրկված են կամ ներառվելու են Եվրոպական համայնքների հաստատությունների ակտերում կամ այդ ակտերի կիրարկման շրջանակներում ներդաշնակեցված ներպետական օրենքներում:

Հոդված 21

Այլ կոնվենցիաների հետ առնչությունը

Սույն Կոնվենցիայի գործողությունը չպետք է բացառի այն միջազգային կոնվենցիաների կիրառումը, որոնց Պայմանավորվող պետությունը մասնակից է կամ դառնում է մասնակից:

Հոդված 22

Վերապահումները

1. Պայմանավորվող ցանկացած պետություն իրավասու է ստորագրման, վավերացման, ընդունման կամ հաստատման պահին իրեն իրավունք վերապահել՝ չկիրառելու՝

ա) հոդված 7«1»-ի դրույթները.

բ) հոդված 10«1»«ե»-ի դրույթները:

2. Պայմանավորվող ցանկացած պետություն իրավասու է նաև հոդված 27«2»-ի համաձայն տարածության վրա Կոնվենցիայի գործողության ընդլայնման մասին ծանուցելիս անել նշված վերապահումներից մեկը կամ մի քանիսը՝ վերապահման գործողությունը սահմանափակելով ընդլայնման մասին ծանուցման մեջ նշված բոլոր տարածքներով կամ դրանց մի մասով:

3. Պայմանավորվող ցանկացած պետություն իրավասու է ցանկացած ժամանակ դադարեցնել իր վերապահման գործողությունը. վերապահումը դադարում է գործել դադարեցնելու մասին ծանուցելու օրվան հաջորդող օրացուցային երրորդ ամսվա առաջին օրվանից:

ԲԱԺԻՆ III. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 23

1. Եթե Պայմանավորվող որևէ պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից հետո այդ պետությունը ցանկանում է սույն Կոնվենցիայի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերի որևէ կոնկրետ տեսակի մասին ընդունել կոլիզիոն նոր նորմեր, ապա այդ պետությունը պարտավոր է իր մտադրության մասին Եվրոպական համայնքների խորհրդի գլխավոր քարտուղարի միջոցով ծանուցել ստորագրող մյուս պետություններին:

2. Ստորագրող ցանկացած պետություն իրավասու է Գլխավոր քարտուղարին տրամադրած ծանուցման օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պահանջել, որպեսզի Գլխավոր քարտուղարը, համաձայնության հասնելու նպատակով, խորհրդակցություններ կազմակերպի ստորագրող պետությունների միջև:

3. Եթե ստորագրող պետություններից ոչ մեկը նշված ժամանակահատվածում խորհրդակցության պահանջ չի ներկայացնում, կամ եթե Գլխավոր քարտուղարին ծանուցելու օրվան հաջորդող երկու տարվա ընթացքում խորհրդակցությունները որևէ համաձայնության չեն հանգեցնում, ապա Պայմանավորվող համապատասխան պետությունն իրավասու է նշված եղանակով փոփոխել իր օրենսդրությունը: Այդ պետության ձեռնարկած միջոցների մասին պետք է տեղեկացվեն ստորագրող մյուս պետությունները Եվրոպական համայնքների խորհրդի գլխավոր քարտուղարի միջոցով:

Հոդված 24

1. Եթե Պայմանավորվող որևէ պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո այդ պետությունը ցանկանում է միանալ մեկ այլ բազմակողմ կոնվենցիայի, որի հիմնական նպատակը կամ նպատակներից մեկը սույն Կոնվենցիայով կարգավորվող խնդիրներից որևէ մեկի վերաբերյալ միջազգային մասնավոր իրավունքի նորմեր ամրագրելն է, ապա կիրառվում է 23-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգը: Այնուհանդերձ, 23-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ նախատեսված երկու տարվա ժամկետը կրճատվում է մեկ տարով:

2. Նախորդ պարբերությամբ սահմանված ընթացակարգը կարելի է չպահպանել, եթե Պայմանավորվող պետությունը կամ Եվրոպական համայնքներից որևէ մեկն արդեն բազմակողմ կոնվենցիայի կողմ է, կամ, եթե վերջինիս նպատակն է վերանայել այն կոնվենցիան, որին արդեն կողմ է տվյալ պետությունը, կամ, եթե տվյալ կոնվենցիան կնքվել է Եվրոպական համայնքների հիմնադրման մասին համաձայնագրերի շրջանակներում:

Հոդված 25

Եթե Պայմանավորվող պետությունը գտնում է, որ հոդված 24«1»-ով չնախատեսված համաձայնագրերի կնքումը բացասաբար է ազդում սույն Կոնվենցիայի գործողության արդյունքում իրականացված միասնականացման վրա, ապա այն կարող է Եվրոպական համայնքների խորհրդի գլխավոր քարտուղարից պահանջել խորհրդակցություններ կազմակերպել սույն Կոնվենցիան ստորագրած պետությունների միջև:

Հոդված 26

Պայմանավորվող ցանկացած պետություն կարող է պահանջել սույն Կոնվենցիայի վերանայում: Այդ դեպքում Եվրոպական համայնքների խորհրդի նախագահը հրավիրում է վերանայման խորհրդաժողով:

Հոդված 27

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետությունների Եվրոպական տարածքների, այդ թվում՝ Գրենլանդիայի, ինչպես նաև Ֆրանսիայի Հանրապետության ամբողջ տարածքի նկատմամբ:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին պարբերությունից՝

ա) սույն Կոնվենցիան չի տարածվում Ֆարերյան կղզիների վրա, եթե Դանիայի Թագավորությունը հայտարարություն չանի հակառակի մասին.

բ) սույն Կոնվենցիան չի տարածվում Միացյալ Թագավորության տարածքից դուրս գտնվող որևէ Եվրոպական տարածքի վրա, որի միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է Միացյալ Թագավորությունը, եթե այդ տարածքի առնչությամբ Միացյալ Թագավորությունը հայտարարություն չանի հակառակի մասին.

գ) սույն Կոնվենցիան տարածվում է Նիդեռլանդների Անթիլյան կղզիների վրա, եթե այդ առնչությամբ հայտարարություն անի Նիդեռլանդների Թագավորությունը:

3. Նման հայտարարություններ կարող են արվել ցանկացած ժամանակ՝ այդ մասին ծանուցելով Եվրոպական համայնքների խորհրդի գլխավոր քարտուղարին:

4. Սույն հոդվածի պարբերություն 2«բ»-ում նշված տարածքների դատարաններից Միացյալ Թագավորություն՝ վերաքննության ներկայացված գործերի վերաբերյալ վարույթները համարվում են այդ դատարաններում ընթացող վարույթներ:

Հոդված 28

1. Սույն Կոնվենցիան 1980 թվականի հունիսի 19-ից բաց է ստորագրման համար Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրի մասնակից պետությունների կողմից:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման այն ստորագրող պետությունների կողմից: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպական համայնքների խորհրդի գլխավոր քարտուղարին:

Հոդված 29

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման մասին յոթերորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվան հաջորդող երրորդ ամսվա առաջին օրվանից:

2. Սույն Կոնվենցիան ավելի ուշ վավերացնող, ընդունող կամ հաստատող յուրաքանչյուր ստորագրող պետության համար ուժի մեջ է մտնում դրա վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու օրվան հաջորդող երրորդ ամսվա առաջին օրվանից:

Հոդված 30

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կլինի հոդված 29«1»-ի համաձայն՝ ուժի մեջ մտնելու օրվանից հետո 10 տարի, նույնիսկ այն պետությունների համար, որոնց համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտել ավելի ուշ:

2. Եթե չեղյալ հայտարարելու մասին որևէ հայտարարություն չի արվում, ապա սույն Կոնվենցիան համարվում է երկարաձգված՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ:

3. Պայմանավորվող պետությունը, որը ցանկանում է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան, պետք է, կախված իրավիճակից, 10 կամ 5 տարվա ժամանակահատվածի ավարտից առնվազն վեց ամիս առաջ այդ մասին ծանուցի Եվրոպական համայնքների խորհրդի գլխավոր քարտուղարին: Չեղյալ հայտարարելը կարող է սահմանափակվել ցանկացած տարածքով, որի վրա Կոնվենցիայի գործողությունը տարածվել է հոդված 27«2»-ով արված հայտարարությամբ:

4. Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում միայն այն պետության համար, որը ծանուցել է այդ մասին: Կոնվենցիան շարունակում է մնալ ուժի մեջ Պայմանավորվող բոլոր մյուս պետությունների համար:

Հոդված 31

Եվրոպական համայնքների խորհրդի գլխավոր քարտուղարը Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրի կողմ հանդիսացող պետություններին ծանուցում է՝

ա) ստորագրությունների.

բ) վավերացման, ընդունման կամ հաստատման մասին ցանկացած փաստաթուղթ ի պահ հանձնելու.

գ) սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամսաթվի.

դ) 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ և 30-րդ հոդվածների համաձայն ներկայացված հաղորդումների.

ե) 22-րդ հոդվածում նշված վերապահումների և վերապահումները դադարեցնելու մասին:

Հոդված 32

Սույն Կոնվենցիային կցված արձանագրությունը կազմում է դրա անբաժանելի մասը:

Հոդված 33

Սույն Կոնվենցիան, որը կազմվել է մեկ բնօրինակով՝ դանիերեն, հոլանդերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և իտալերեն, որոնց տեքստերը հավասարապես նույնական են, ի պահ է հանձնվում Եվրոպական համայնքների խորհրդի քարտուղարության արխիվ: Գլխավոր քարտուղարը դրա հաստատված պատճենն ուղարկում է ստորագրող յուրաքանչյուր պետության կառավարությանը:

Ի հաստատումն որի, ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Հռոմում, հազար ինը հարյուր ութսուն թվականի հունիսի տասնիննին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանավորվող բարձր կողմերը համաձայնեցին հետևյալ դրույթի շուրջ, որը կցվում է Կոնվենցիային.

Անկախ Կոնվենցիայի դրույթներից՝ Դանիան իրավասու է շարունակելու պահպանել «Sloven»-ի (Օռվային իրավունքի ստատուտի) 169-րդ պարբերության նորմերը, որոնք վերաբերում են ծովով ապրանքների փոխադրման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվող իրավունքին, ինչպես նաև վերանայել այդ նորմերը՝ չպահպանելով Կոնվենցիայի 23-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգը:

Ի հաստատումն որի, ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն արձանագրությունը:

Կատարված է Հռոմում, հազար ինը հարյուր ութսուն թվականի հունիսի տասնիննին:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին» կոնվենցիան ստորագրելու պահին Բելգիայի Թագավորության, Դանիայի Թագավորության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Ֆրանսիայի Հանրապետության, Իռլանդիայի, Իտալիայի Հանրապետության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության, Նիդերլանդների Թագավորության և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարությունները,

I. ցանկանալով հնարավորինս խուսափել կոլիզիոն նորմերը տարբեր փաստաթղթերով սահմանելուց և այդ նորմերի միջև առկա տարբերություններից, ցանկություն են հայտնում, որ Եվրոպական համայնքի կառույցները, իրենց ստեղծման մասին համաձայնագրերով նախատեսված լիազորություններն իրականացնելիս, անհրաժեշտության դեպքում, փորձեն ընդունել այնպիսի կոլիզիոն նորմեր, որոնք հնարավորինս կհամապատասխանեն սույն Կոնվենցիայով նախատեսված նորմերին,

II. մտադիր են սույն Կոնվենցիայի ստորագրման պահից մինչև 24-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների ստանձնումը խորհրդակցել միմյանց հետ, եթե ստորագրող պետություններից որևէ մեկը ցանկանա դառնալ այլ կոնվենցիայի կողմ, որի նկատմամբ կիրառվում է 24-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգը,

III. հաշվի առնելով Եվրոպական համայնքում կոլիզիոն նորմերի «Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին» կոնվենցիայի դերը միասնականացման հարցում՝ կարծում են, որ ցանկացած պետություն, որը դառնում է Եվրոպական համայնքների անդամ, պետք է միանա սույն Կոնվենցիային:

Ի հաստատումն որի, ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն հայտարարությունը:

Կատարված է Հռոմում, հազար ինը հարյուր ութսուն թվականի հունիսի տասնիննին:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բելգիայի Թագավորության, Դանիայի Թագավորության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Ֆրանսիայի Հանրապետության, Իռլանդիայի, Իտալիայի Հանրապետության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության, Նիդերլանդների Թագավորության ու Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարությունները

«Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին» կոնվենցիան ստորագրելիս,

ցանկանալով ապահովել Կոնվենցիայի հնարավորինս արդյունավետ կիրառումը,

ցանկանալով կանխել Կոնվենցիայի մեկնաբանման տարբերությունները որոնք վնաս կհասցնեն Կոնվենցիայի միասնականացնող ազդեցությանը,

հայտարարում են, որ իրենք պատրաստ են՝ 1. դիտարկել որոշ հարցերի նկատմամբ իրավասությունը Եվրոպական համայնքի արդարադատության դատարանին վերապահելու հնարավորությունը և, անհրաժեշտության դեպքում, բանակցություններ վարել՝ դրա շուրջ համաձայնության գալու ուղղությամբ.

2. պարբերաբար հանդիպումներ կազմակերպել իրենց ներկայացուցիչների միջև:

Ի հաստատումն որի, ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն հայտարարությունը:

Կատարված է Հռոմում, հազար ինը հարյուր ութսուն թվականի հունիսի տասնիննին: